



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆ ՀՅՈՐ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ՊԱՏԳԱՄԸ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՁԵԶԻ

«Մինչ այս մասին կը խօսեին, ահա նոյնիսկն Յիսուս կեցաւ անոնց մէջտեղ եւ ըսաւ անոնց. Խաղաղութիւն ձեզի. ես եմ, մի՛ վախնաք»:
(Ղուկաս 24:36)

«Խաղաղութիւն ձեզի»: Այս բառերով էր որ մեր Տէրը՝ Յիսուս Զրիստոս ողջունեց իր աշակերտները, երբ յարութիւն առնելէ ետք երեւցաւ անոնց:

Ս. Յարութեան երեկոյեան, առաքեալները խմբուած էին փակ դռներու ետին, ահով ու շփոթով: Անոնք երկիւղով լեցուած էին, որովհետեւ ականատես եղած էին խաչին վրայ իրենց սիրելի Վարդապետին՝ Յիսուս Զրիստոսի բազմաչարչար մահուան: Անոնք նաեւ շփոթահար էին թափուր գերեզմանին ի տես, զոր գտած էին Պետրոս եւ Յովհաննէս: Թեպէտեւ Զրիստոս աշակերտներուն յայտնած էր իր խաչելութեան ու յարութեան մասին, ու տակաւին՝ Մարիամ Մագթաղեմացին վկայած էր թէ յարուցեալ Փրկիչին հանդիպած է թափուր գերեզմանին մօտ, սակայն աշակերտները չէին կրցած ձերբազատիլ ահի զգացումէն, որովհետեւ չէին կրնար ըմբռնել թէ ի՞նչ կը պատահեր:

Ահա մխիթարութեան ու վստահութեան կարիքի ճիշդ այդ պահուն, Յիսուս եկաւ առաքեալներուն մօտ ու զանոնք ողջունեց ըսելով. **«Խաղաղութիւն ձեզի»:** Ան փարատեց անոնց անձկութիւնը՝ վախի զգացումն ու կասկածը փոխարինելով ցնծութեամբ: Ահա Ս. Յարութեան հզօր պատգամն է այս, որ կեանքի ամենէն դժուար պահերուն, մեր ամենէն մտահոգ ու անձկալից վայրկեաններուն, պետք չէ զարհուրինք, որովհետեւ մեր Փրկիչը մի՛շտ մեզի հետ է, **«Խաղաղութեան Իշխանն»** է բոլորիս համար (Եսայի 9:6):

Մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսի յաղթական Ս. Յարութիւնը ո՛չ միայն պատմական իրողութիւն է, այլ նաեւ մեր առօրեայ կեանքին մաս կազմող ճշմարտութիւն: Աստուած իր Միածին Որդին ղրկեց, որպէսզի խաչին վրայ զոհուի մեր մեղքերուն համար. Զրիստոս յարութիւն առաւ եւ պարտութեան մատնեց մահը, որպէսզի նոր կեանք շնորհէ բոլոր անոնց՝ որոնք կը հաւատան Իրեն: Մահուան վրայ իր յաղթանակով, մեզի շնորհուեցաւ փրկութեան ու յաւիտենական կեանքի խոստումը: Հետեւաբար, Ս. Յարութիւնը աղբիւր է յոյսի, քաջալերանքի, ուժի եւ խաղաղութեան:

Ինչպես որ առաքելները եւ իւղաբեր կանայք, Զրիստոսի խաչելութեան նախօրեակին ու անկէ անմիջապէս ետք, պարուրուած էին վախի զգացումով, ի տես թափուր գերեզմանին, մենք ալ մեր առօրեային ընթացքին յաճախ կ'իյնանք վախի ու անորոշութեան ալիքներու մէջ: Առաքելներուն յուսախաբութիւնը փոխարինուեցաւ խաղաղութեամբ եւ յոյսով, երբ իմացան յաղթական աւետիսը, թէ՛ խաչեալ Զրիստոսը յարութիւն առած էր:

Մեզմէ շատեր վախի ու մնայուն անձկութեան մէջ կ'ապրին, մտահոգուելով, թէ ապագան ի՞նչ պիտի բերէ մեզի. այնքան կը մտահոգուինք, որ յաճախ չենք գնահատեր մեր առօրեայ կեանքի օրհնութիւններն ու բարիքները: Ս. Յարութեան տօնը կը պատգամէ, թէ Յիսուս Զրիստոս կու գայ յաղթահարելու մեր երկիւղը, որպէսզի սպառազինուինք իր շնորհած սիրով, ուրախութեամբ եւ խաղաղութեամբ: Երբ սրտաբեկ ենք, երբ մատնուած ենք շփոթի, մտահոգութեան եւ անորոշութեան, պետք չէ մոռնանք, որ յարուցեալ Զրիստոսը միշտ մեզի հետ է, իր սիրով մեզ մխիթարելու եւ հանգչեցնելու: Պետք չէ մոռնանք, որ ան յարութիւն առաւ մեզի վստահեցնելու, որ Ինք մեր կենդանի ու ապրող Տէրն է, կը բնակի մեր սիրտերուն մէջ, մեր վախն ու երկիւղը կը փարատէ ու մեզի կատարեալ կեանք կը շնորհէ:

Յետեւաբար, պետք չէ երբեք վարանինք կամ զարհուրինք, որովհետեւ Ան մահը զգետնեց եւ մեզի նոր կեանք շնորհեց: **«Ասոնք խօսեցայ ձեզի, որպէսզի ինձմով խաղաղութիւն ունենաք: Աշխարհի վրայ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջալերուեցէք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին»** (Յովհ. 16:33):

Սիրելի հաւատացեալներ,

Մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսի մեզի պարգեւած նոր կեանքը ընդունելու համար, Ս. Յարութեան տօնէն աւելի լաւ առիթի պետք չէ սպասենք: Եկէ՛ք, Իրեն վստահինք մեր կեանքերը, զԻնք ընդունելով իբրեւ մեր Փրկիչը, որպէսզի մեր մէջ ունենանք յարուցեալ Զրիստոսի պարգեւած սերը, ուրախութիւնն ու խաղաղութիւնը: Եկէ՛ք, վստահինք Իրեն իբրեւ մեր Փրկիչը եւ մեր կեանքն ու կամքը յանձնենք Իրեն, որպէսզի իմանանք, թէ յարուցեալ Փրկիչին սերը, ուրախութիւնն ու խաղաղութիւնը կ'ապրին մեր մէջ:

Մեր Տիրոջ չարչարանքներուն, խաչելութեան, թաղման ու յարութեան վկաները հանդիսացող արիասիրտ իւղաբեր կիներուն պէս, մենք ալ հաստատ մնանք յարուցեալ Փրկիչին հանդէպ մեր հաւատարմութեան ու նուիրումին մէջ, ծնրադիր աղօթենք Յարուցեալին ոտքերուն առջեւ, մեր սիրտերը Իրեն բանալով ու իր պարգեւած խաղաղութիւնն ու փրկութիւնը ստանալով:

Արդարեւ, Զրիստոսի Ս. Յարութեան խորհուրդը իւրայատուկ իմաստ ու պատգամ ունի մեզի՝ Յայ ժողովուրդի զաւակներուս համար, մանաւանդ այս օրերուն, երբ կ'ոգեկոչենք յիշատակը 95 տարի առաջ գործադրութեան դրուած Ցեղասպանութեան զոհ մեր բիւրաւոր նահատակներուն: Բաջարի մեր նահատակները եւս քալեցին Զրիստոսի զոհաբերութեան ճամբով. մենք եւս յաղթանակ տարինք մահուան վրայ ու այսօր կը շարունակենք վերականգնումի, մեր պատմութեան եւ հաւատքին հանդէպ հաւատարմութեան երթը:

Ս. Յարութեան տօնի խորհուրդին մասնակից ու առնչակից եղան իւղաբեր կանայք, որոնք հաւատարմութեան ու հաւատքի տիպար օրինակներ են բոլոր քրիստոնէայ կանանց, բայց մանաւանդ հայ կնոջ համար, որուն ձօնուած է 2010 տարին, Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ: Հայ Կինը եւս հաւասար մասնակից է եղած մեր պատմութեան ու աւանդութեանց, ինչպէս նաեւ քրիստոնէական մեր կեանքի կերտումին մէջ, տոգորուած՝ Ս. Յարութեան յաղթանակի պատգամով:

Ս. Յարութեան յաղթական ու ցնծալից տօնին առիթով ու անոր ներշնչած ապրումներով, հայրական սիրով կ'ողջունենք թեմիս Հոգեւորականաց Դասը, Ազգային Վարչութիւնը, Ազգային Երեսփոխանները, Կրթական Համակարգին նուիրեալները, հայկական կազմակերպութիւններն ու միութիւնները եւ հաւատացեալ ժողովուրդը, աղօթելով, որ մահուան վրայ մեր Տիրոջ տարած յաղթանակը վերակենսաւորէ եւ գօտեպնդէ մեզ, խաղաղութիւն պարգեւէ մեր անհատական ու հաւաքական կեանքերուն, այսօր եւ յաւիտեանս յաւիտենից:

«Թող ձեր վայելած շնորհքն ու խաղաղութիւնը առատանան՝ Աստուծոյ եւ մեր Տիրոջ Յիսուսի մասին ձեր ունեցած գիտութեամբը» (Բ. Պետրոս 1:2): Ամէն:

**ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ**

Աղօթարար՝
Մուշեղ Արք. Մարտիրոսեան
Առաջնորդ

Ս. Յարութիւն, 2010

PRELATE'S EASTER MESSAGE

PEACE BE WITH YOU

Now as they said these things, Jesus Himself stood in the midst of them, and said to them, "Peace to you." (Luke 24:36)

"Peace be with you". These are the words our Lord Jesus Christ spoke to the disciples during His first manifestation to them after His resurrection.

On the evening of the Resurrection, the disciples were gathered behind locked doors in fear and confusion. They were afraid as they had witnessed the agonizing death of Jesus Christ on the cross, and confused at the empty tomb that Peter and John had found earlier that day. Though Jesus Christ had foretold of His crucifixion and Resurrection, and Mary Magdalene had told them of her encounter with Jesus near the tomb where He had been laid, they were so overwhelmed with fear they could not comprehend what had happened.

It was in this moment of great need for comfort and assurance that Jesus came to them and greeted them saying, "Peace be with you", thus alleviating their fears and anxiety and replacing their fear and doubt with joy. The message being that in our darkest hours, in our most worrisome and troubling moments, we need not be afraid for our Savior is always with us; He is **"the Prince of Peace" (Isaiah 9:6)**.

The Resurrection of our Lord Jesus Christ is not only a historical fact but also a reality in our everyday lives. God sent His only-begotten Son to die for our sins, and Christ rose and conquered death to grant new life to all those who believe in Him. With His victory over death, we are given the promise of salvation and of eternal life. His Resurrection is a source of hope, encouragement, strength, and also a source of peace.

Like the disciples in the days leading up to and after the crucifixion and the women who were overcome by fear at the sight of the empty tomb, we too live in fear and perplexity. Their emptiness was replaced by peace and hope however, when they received the good news announcing that the crucified Jesus was raised from the dead.

So many of us live in fear and constant worry about what the future holds for us, so much so that we sometimes miss the blessings and joys of the present. The message of the Resurrection is that Jesus Christ comes to break through our fear so that we can receive the love, joy, and peace He offers us. When we are downhearted, confused, worried, and uncertain, the risen Christ is with us to lovingly comfort us. That He rose from the dead assures us that He is our ever-present living Lord who dwells in our hearts, dissipating our fears and giving us our fullest life. We need not be troubled or afraid, for He conquered death and by doing so gave us new life. **"These things I have spoken to you, that in Me you may have peace. In the world you will have tribulation; but be of good cheer, I have overcome the world" (John 16:33)**.

Dear faithful,

There is no better time to accept the new life our Lord Jesus Christ offers us. Let us trust in Him as our Savior and surrender our will to Him so that we may know the love, joy, and peace of the resurrected Christ living inside of us.

Like the courageous women who witnessed the brutal torture, crucifixion, burial, and resurrection of our Lord, may we remain steadfast in our loyalty and devotion to God, falling in worship at the feet of our risen Lord, opening our hearts to Him and accepting the peace and salvation He offers.

The uplifting message of the Resurrection of Christ has special meaning for us as Armenians, especially in these days when we prepare to commemorate the 95th anniversary of the Genocide. Our brave forefathers sacrificed their lives for their faith and nation, but we too triumphed over death and we continue on our path stronger and resolute in our allegiance to our faith and heritage.

This year is also notable as we will be celebrating the lives and invaluable contributions of Armenian women in response to the proclamation by H.H. Catholicos Aram I declaring 2010 as the Year of the Armenian Woman. Just as the women who were witnesses to the earthly ministry of our Lord Jesus Christ, the Armenian woman also, armed with the triumphant message of the Resurrection and love for our faith and people, has been not only a witness but an active participant in the shaping and development of our nation.

On this joyous occasion, we extend our paternal love and well wishes to our clergy, Executive Council members, delegates, parish representatives, educational institutions, sister organizations, and our faithful parishioners, praying for the inspiring message of the Resurrection to reinvigorate and uplift us all, bring peace to our individual and collective lives, and elevate us to new heights and new life.

“Grace and peace be yours in abundance through the knowledge of God and of Jesus our Lord” (2 Peter 1:2).

***"Christ is risen from the dead.
Blessed be the Resurrection of Christ."***

Prayerfully,
Archbishop Moushegh Mardirossian
Prelate, Western United States

Easter 2010